

### **Դասախոսություն 1.3. Խտրականությունից զերծ մնալու և հավասարության իրավունք**

Խտրականությունից զերծ մնալու իրավունքը հիմնականում դիտարկում է մարդու այլ հիրավունքների հետ համատեղ:

Այսինքն, երբ խոսում ենք խտրականության մասին ի նկատի ենք ունենում մարդու որևէ իրավունքի կամ իրավունքների խախտում խտրականության հետևանքով: Նման դրսևորման վառ օրինակ է հանդիսանում՝ մարդուն բժշկական օգնություն չտրամադրելը իր մաշկի տարբերվող գույնի պատճառով: Բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելիս պացիենտի իրավունքների խախտումները հաճախ են լինում հենց խտրականության հետևանքով, ինչը պատճառ է դարձել այս տեսակի իրավունքի խախտման առանձին բաժին հատկացնելուն:

Մարդու խտրականությունից զերծ մնալու և հավասարության իրավունքը պաշտպանված է մի շարք միջազգային և ներպետական իրավական փաստաթղթերով, որոնք պարտադիր են իրականացման համար: Այդ իրավական փաստաթղթերից են՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը, ՀՀ Սահմանադրությունը, Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենքը և այլն:

#### ***Սահմանադրության հոդված 29. Խտրականության արգելքը***

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

#### ***Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենքի Հոդված 4. Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու մարդու իրավունքը***

Յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Հայաստանի Հանրապետությունում ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալ անվճար կամ արտոնյալ պայմաններով՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում:

...

...

***ՔՔԻՄԴ 26-րդ հոդված.***

Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առաջ և առանց որևէ խտրականության օրենքով ենթակա են հավասար պաշտպանության: Այդ առնչությամբ որևէ կարգի խտրականություն պետք է արգելվի օրենքով և օրենքը բոլոր անձանց համար պետք է երաշխավորի հավասար և արդյունավետ պաշտպանություն խտրականությունից, ըստ որևէ հատկանիշի, այն է՝ ըստ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի, ծննդի կամ այլ հանգամանքի:

***Խտրականությունից զերծ մնալու և հավասարության իրավունքի հնարավոր խախտումների օրինակներ***

- Ապաստրասան հայցողներին մերժում են առողջապահական ծառայություններ տրամադրելուց, բացի շտապ բուժօգնությունից:
- Թմրամիջոց օգտագործող անձիք քիչ են ներկայացված ՄԻԱՎ-ի բուժման ծրագրերում, թեև նրանց շարժանում ՄԻԱՎ վարակակր առավել տարածված է:
- Շիզոֆրենիա ախտորոշում ունեցող կնոջն ասում են, որ որովայնի շրջանի ցավերը «բոլորը քո գլխում են» և չեն ցուցաբերում պատշաճ օգնություն: Հետագայում նրա մոտ ախտորոշվում է ձվարանների քաղցկեղ:

***Օգտակար գրականություն և հղումներ.***

1. ՀՀ Սահմանադրություն <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>
2. ՀՀ օրենք Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին.  
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120781>
3. ՀՀ օրենք Անձնական տվյալների պաշտպանության մասին  
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120901>
4. ՀՀ Քրեական օրենսգիրք <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=125137>
5. ՀՀ օրենք Սարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120793>